ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2026 թվականի թիվ 2111-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սարգիս Զիվանի Վարդանյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 63 / 16 հասցեում կառուցված 25.85 քմ մակերեսով ավտոտնակը, 29.96 քմ մակերեսով խորդանոցը, 13.68 քմ մակերեսով նկուղը և 29.96քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով Արմեն Մինասյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 63 / 16 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 23.04.2026թ. թիվ 975-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 21.07.2026թ. պետական գրանցում ստացած 29.96 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, 29.96 քմ մակերեսով խորդանոցը՝ 1քմ՝ 3346 դրամ, 13.68 քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, 25.85 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Սարգիս Զիվանի Վարդանյանին:
2. Քաղ. Սարգիս Վարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 14
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2026 թվականի թիվ 2112-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով քաղ. Ժիրայր Մարգարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Ժիրայր Մարգարյանին պատկանող, Լճաշեն գյուղի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 14.04.1991թ. N10 նիստի որոշմամբ՝ Սուսամբար Վարդանյանին, Ժիրայր, Արմինե և Արփինե Մարգարյաններին հատկացված 2.41հա մակերեսով հողատարածքը՝ որից՝ անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 0.25հա մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Ժիրայր Վաղիկի Մարգարյանին /ծնված՝ 21.12.1958թ. / պատկանող, Լճաշեն գյուղի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.04.1991թ. N10 նիստի որոշմամբ Ժիրայր Վաղիկի Մարգարյանին /ծնված՝ 21.12.1958թ. /, Սուսամբար Անդրանիկի Վարդանյանին /ծնված՝ 16.05.1966թ. /, Արմինե Ժիրայրի Մարգարյանին /ծնված՝ 04.03.1987թ. /, Արփինե Ժիրայրի Մարգարյանին /ծնված՝ 18.06.1989թ. / հատկացված 2.41հա մակերեսով հողատարածքից ավել օգտագործվող 0.08667հա մակերեսով բնակելի նշանակության հողատարածքը, որը գտնվում է 0.25հա մակերեսով անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված հողատարածքին կից, ճանաչել Սուսամբար Վարդանյանի, Ժիրայր, Արմինե և Արփինե Մարգարյանների սեփականության իրավունքը:
2. Սուսամբար Վարդանյանին, Ժիրայր, Արմինե և Արփինե Մարգարյաններին պատկանող 0.33667հա մակերեսով հողատարածքում 1973թ. կառուցված

168.49քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 126.65քմ/, 26.61քմ մակերեսով ծածկը, 1990թ. կառուցված 16.23քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 11.23քմ/, 1975թ. կառուցված 136.96քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 109.44քմ/, 1990թ. կառուցված 60.16քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 54.75քմ/, 1988թ. կառուցված 22.20քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 18.71քմ/, 31քմ մակերեսով ծածկը և 1982թ. կառուցված 38.31քմ կառուցված պարիսպը ճանաչել Սուսամբար Վարդանյանի, Ժիրայր, Արմինե և Արփինե Մարգարյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն, 26-րդ փողոց թիվ 20 բնակելի տուն հասցե:

3. Սուսամբար Վարդանյանին, Ժիրայր, Արմինե և Արփինե Մարգարյաններին պատկանող 0.33667հա մակերեսով հողատարածքում 2022թ. կառուցված 32.95քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 29.11քմ/ ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 14
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2026 թվականի թիվ 2113-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Պարգև Վարդանյանի Վարդանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամական, տնամերձ հասցեում գտնվող 0.433 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Պարգև Վարդանյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամական, տնամերձ հասցեում գտնվող 0.433 հա մակերեսով հողատարածքում /վկայական՝ 1600324, տրված՝ 02.05.2003թ./ սեփականատիրոջ կողմից 2018թ. ինքնակամ կառուցված 1.82 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 1,60քմ/, 29,27 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 22,34քմ/, 0,44 քմ մակերեսով պարիսպը, 38.71 քմ մակերեսով ծածկը, 2009թ. կառուցված 78.79քմ մակերեսով ձեղնահարկը /ներքին մակերեսը՝ 57,49/, 2,15 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026KDPWMN/ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874 դրամ /բնակելի տուն, ավտոտնակ, ծածկ, ձեղնակարկ/, պարսպի համար՝ 1քմ՝ 524.4 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 14
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2026 թվականի թիվ 2114-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Պարզև Ստեփանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Շահումյան փողոց 17 հասցեում գտնվող 0.14 հա մակերեսով հողամասում

/ վկայական N 10092015-05-0013/ սեփականատիրոջ կողմից ինքնական կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Պարզև Ստեփանի Ստեփանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Շահումյան փողոց 17 հասցեում գտնվող 0.14 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2001թ. ինքնական կառուցված 70.55 քմ մակերեսով ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 59.67քմ/, 5.06քմ մակերեսով պարսպի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026998DAN/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1969 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 14
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2026 թվականի թիվ 2115-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25-րդ, 27-րդ և 32-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Տիգրան Քոչարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 շենք, 3 բնակարան հասցեում գտնվող 61.43 քմ մակերեսով բնակարանին կից՝ ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Տիգրան Արշավիրի Քոչարյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 շենք, 3 բնակարան հասցեում գտնվող 61.43քմ մակերեսով բնակարանին կից՝ սեփականատիրոջ կողմից 2014թ. ինքնակամ կառուցված 8.34քմ մակերեսով բնակարանի /ներքին մակերեսը՝ 6.60քմ/ շինարարական աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026NXTETL/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 501.9դրամ:
2. Օրինական ճանաչել ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 շենքում առկա ինքնակամ կառույցները:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով, պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 14
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2116-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Նորիկ Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2600քմ մակերեսով հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 779.03 քմ մակերեսով անասնաշենքը և 4.81քմ մակերեսով զուգարանն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Նորիկ Արտուշի Հակոբյանի կողմից՝ Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 779.03քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 727.79 քմ/, 4.81քմ մակերեսով զուգարանը /ներքին մակերեսը՝ 3.19քմ/ և զբաղեցրած 2600քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Նորիկ Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված 779.03քմ մակերեսով անասնաշենքը, 4.81քմ մակերեսով զուգարանը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026W7TAQE/ տրամադրելով Սևան համայնք, գ. Զովաբեր, 3-րդ նրբանցք թիվ 12 / 1 անասնաշենք հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային

սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 17
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.geggharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2117-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Օղակաձև փողոց թիվ 5 հասցեում գտնվող բնակավայրերի՝ նպատակային նշանակություն, - բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակություն ունեցող 0.12հա մակերեսով հողատարածքի /վկայական N13082026-05-0002/ գործառնական նշանակությանը փոխել ընդհանուր օգտագործման նշանակության:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 17
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2118-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Գ. ԱՌԻՆՋ, ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 8 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ԿՈԼՅԱՅԻ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. 17.07.2026թվականին Սևանի համայնքապետարան մուտքագրվել է ՀՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի միջնորդագիրը՝ քաղաքացի Գագիկ Ծառուկյանին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա ինքնակամ շինությունների վերաբերյալ: Խնդրի մանրամասն ուսումնասիրման նպատակով Վահրամ Հակոբյան ԱԶ-ի ներկայացուցչը՝ մասնակցությամբ Սևանի համայնքապետի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Մ. Մկրտչյանի և բաժնի պետի տեղակալ Հ. Ղուկասյանի, տեղում առաջացած հարցերի պարզաբանման նպատակով իրականացրել է հողատարածքներում առկա շենք-շինությունների չափագրման աշխատանքներ և պարզել է շինությունների կառուցման բացարձակ նիշը: Չափագրումներից պարզվել է, որ քաղաքացի Գագիկ Ծառուկյանին տրամադրված վարձակալական հողատարածքում (վկայական N 0016601, տրված՝ ՀՀ ԿԿ-ի կողմից) առկա է 211.5 մետր երկարությամբ, 2.75 մետր բարձրությամբ քարե պարիսպ: Պարիսպները կառուցված են 1902.3մետր բացարձակ նիշի վրա, այսինքն՝ դրանք գտնվում են 1905մետր բացարձակ նիշից ցածր: Չափագրումներից պարզվել է նաև, որ քաղաքացի Գագիկ Ծառուկյանին վարձակալությամբ տրամադրված հողատարածքում (վկայական N 2386489, տրված՝ ՀՀ ԿԿ-ի կողմից), ըստ պետական գրանցման վկայականի, առկա են հետևյալ ինքնակամ շինությունները՝ 63.9քմ մակերեսով պահակատուն, 220.95 քմ մակերեսով անգարներ, 156.66քմ մակերեսով ճաշարան, 52.73 մետր ընդհանուր երկարությամբ և 2.65մետր բարձրությամբ քարից պատեր, 106.19 մետր երկարությամբ քարից պարիսպներ, 78.64 քմ մակերեսով նավամատույց, երկաթ-բետոնից կառուցված 129.3մետր երկարությամբ ափապաշտպան կառույց, որը ջրի մակերևույթից բարձր է 2 մետրով: Բոլոր շինությունները կառուցված են 1902.1-ից մինչև 1903.6 մետր բացարձակ նիշերի վրա, այսինքն՝ դրանք գտնվում են 1905մ բացարձակ նիշից ցածր: Հիմնավորված է այն փաստը, որ քաղաքացի Գագիկ Ծառուկյանը խախտել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, ինքնակամ կառուցել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվում նաև այն փաստը, որ տվյալ շինությունները կառուցվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին

2300

մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել վարձակալության իրավունքով Գագիկ Ծաղուկյանին տրամադրված հողատարածքներում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 17
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2119-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Նորիկ Լալա Միրզոյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 2 / 14 հասցեում կառուցված 25.0քմ մակերեսով ավտոտնակը, 25.0քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով Լալա Միրզոյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 2 / 14 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 30.07.2026թ. թիվ 1934-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 13.08.2026թ. պետական գրանցում ստացած 25.0 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, 25.0քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Լալա Ռադիկի Միրզոյանին :
2. Քաղ. Լալա Միրզոյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 17
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2120-Ա


**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 1686-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի «Հասցե տրամադրելու մասին» N 1686-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման 1-ին կետում՝ «տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ազատամարտիկների փողոց 8 բնակելի տուն հասցե» բառերի փոխարեն կարդալ «տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ազատամարտիկների փողոց թիվ 6 կիսակառույց հասցե» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 17
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2121-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի
N 1941-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 30-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1941-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման 1-ին կետում՝ «0.00670հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.00228հա մակերեսով» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 17
ք. Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2122-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Նվարդ Խաչատրյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Նվարդ Խաչատրյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Խորհուրդների փողոց թիվ 12 հասցեում գտնվող հողամասում տնտեսական շինության և պարսպի կառուցման համար:
2. Նվարդ Խաչատրյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 17
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.geggharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2123-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Տարոն Պետրոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 122 ավտոտնակ /վկայական N 30012025-05-0126/, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 123 ավտոտնակ /վկայական N 08102024-05-0044/ հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 122 ավտոտնակ և Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 123 ավտոտնակ հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 122 ավտոտնակ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով, պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 17
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2026 թվականի թիվ 2124-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Նորիկ Նորիկ Մարաբյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 42 / 3 հասցեում կառուցված 25.91 քմ մակերեսով ավտոտնակը և 46.60 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով Արմեն Մինասյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, դրանք հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 42 / 3 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21.07.2026թ. թիվ 1802-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 11.08.2026թ. պետական գրանցում ստացած 46.60քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, 25.91քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 673 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Նորիկ Խաչատուրի Մարաբյանին:
2. Քաղ. Նորիկ Մարաբյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 17
ք.Սևան

